

Թիւ 27058  
Հոկտեմբեր 28, 1980

Մեծայարգ  
Տիար Ազօն Թոզաթեան  
Նիւ Եորք.

Յարգելի Տիար Թոզաթեան,

Ստացած ենք Տիար Տիգրան Պազալեանի միջոցաւ Առաջնորդարանի գրադարանին ձեր կողմէ նուիրուած ``նարեկ`` գիրքը, որուն համար կը յայտնենք մեր խորին շնորհակալութիւնը:

Մօտ երկու հարիւր տարուան հնութիւն ունեցող այս արժէքաւոր գիրքը մաս պիտի կազմէ Առաջնորդարանի գրադարանին մէջ արդէն իսկ գտնուող այլ հնաաիպ հատորներու:

Ձեր այս նուէրին կապակցութեամբ մօտերս հայ մամուլին պիտի դրկուի հաղորդագրութիւն մը, որմէ օրինակ մըն ալ պիտի յղուի ձեր հասցէին:

Կ'աղօթենք որ Տէրը ձեզի ու ձեր հարազատներուն պարգեւէ առաւել քաջաողջ ու երկար կեանք:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ